# Ինչպես բացել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի կողմից կոդավորված էլ. նամակը

Հարգելի Հաճախորդ,

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի համար անվտանգությունը հիմնական առաջնայնություններից է, հատկապես, երբ գործ ունենք մեր հաճախորդների բանկային տվյալների հետ: Մեր նպատակն է մշտապես մատուցել անվտանգ և ապահով բանկային ծառայություն, մասնավորապես, երբ հաճախորդներին տրամադրում ենք գաղտնի տեղեկատվություն: Այդ իսկ պատճառով իրականացնում ենք էլ. նամակների կոդավորում, որը նվազեցնում է գաղտնալսման, տեղեկատվության հափշտակման և զեղծարարությունների իրականացման վտանգը: Ուստի, մեր կանոնակարգերի համաձայն՝ կոդավորում ենք այն բոլոր էլ. նամակները, որոնց պաշտպանվածությունը անհրաժեշտ է հաճախորդների անձնական տեղեկատվության անվտանգության ապահովման համար:

Մեր կողմից կոդավորված էլ. նամակ ուղարկելու դեպքում այն անմիջապես կհայտնվի Ձեր էլ. փոստի մուտքային նամակների մեջ, որին կցված է լինում HTML ֆայլ: Հետևելով այս քայլերին՝ Դուք կկարողանաք կարդալ ուղարկված էլ. նամակը՝

1. Ներբեռնեք և բացեք **message–zdm.html** անվամբ HTML ֆայլը
2. սեղմեք **Sign in and Read Message** կոճակը
3. ստեղծեք SecureMail անձնական էջ և գրանցեք Ձեր նույնականացման անունն ու գաղտնաբառը հետևյալ կերպ՝
    - բացված ինտերնետային էջում տրամադրեք Ձեր էլ. փոստի հասցեն, լրացրեք պահանջվող տեղեկատվությունը՝ ներառյալ գաղտնաբառը, որը պետք է պարունակի նվազագույնը 8 նիշ (տառերի և թվերի համադրություն), և սեղմեք **Submit** կոճակը
    - Ձեր տվյալների մուտքը հաջողությամբ հաստատվելու դեպքում վերաբացեք էլ. փոստը
    - բացեք մուտքագրվող նամակների ցանկից **SecureMail Verification** նամակը, որը կպարունակի հղում
    - անցեք հղումով Ձեր էջը ակտիվացնելու և ապակոդավորված էլ. նամակը կարդալու համար

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել **+374 60 655 000** հեռախոսահամարով կամ այցելել մեր ցանկացած մասնաճյուղ:

Հարգանքով՝
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան